| | |
|---|---|
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | *032101.01.6 Լրագրություն* |
| ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | *Լրագրություն* |
| ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ | *Լրագրության մագիստրոս* |
| ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ | *Առկա և հեռակա* |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ | *Առկա՝ 1.5 տարի*<br>*Հեռակա՝ 2 տարի* |
| ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԻԶԲ | *Սեպտեմբերի առաջին շաբաթը (առկա)*<br>*Հոկտեմբեր, նոյեմբեր(հեռակա)* |
| ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ | *90 կրեդիտ /*ECTS/ |
| ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԼԵԶՈՒՆ | *Հայերեն* |
| ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ | *Թեզի պաշտպանություն* |
| ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ<br>/գիտելիք, կարողություն, հմտություն/ | *ԳԻՏԵԼԻՔ*<br>• *Կուրացնի ընդհանուր զարգացում ապահովող գիտելիքներ*<br>• *Կուրացնի զանգվածային լրատվության միջոցների տարբեր տիպերի ու տեսակների համար նյութերի ստեղծումը՝ դրանց առանձնահատկությունների հաշվառմամբ*<br>• *Կուրացնի գիտելիքներ ԶԼՄ-ների տարբեր տեսակներում օգտագործման համար նախատեսվող նյութերի մշակումն ու համապատասխանեցումը տվյալ լրատվամիջոցում ընդունված պահանջներին (լեզվական նորմեր, մասնագիտական չափորոշիչներ, ֆորմատներ, ոճեր, տեխնոլոգիական և այլ բնույթի պահանջներ).*<br>*ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ*<br>• *Կկարողանա ընդհանուր զարգացում ապահովող գիտելիքները կիրառել մասնագիտական ոլորտում գործունեություն ծավալելիս*<br>• *Կկարողանա հասարակության տարբեր խավերի, պետական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ԶԼՄ-ների հետ համագործակցության մեջ ներգրավվել, փոխգործակցել, մասնակցել սոցիալական հնչեղություն ունեցող հարցերի հասարակական քննարկումներին ու բանավեճերին*<br>• *Կկարողանա կազմակերպել լսարանի հետ գործնական ու ինտերակտիվ շփումը, հաստատել տեղեկատվական-կոմունիկատիվ կապեր՝ արդի մեդիամիջոցների և նորագույն* |

| | |
|---|---|
| | *տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ.*<br>• *Կկարողանա իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան՝ մասնակցել տվյալ զանգվածային լրատվության ստորաբաժանումների, կոլեկտիվի աշխատանքի կազմակերպմանը, տեղեկատվական դաշտում առաջ մղել մեդիաարտադրանքը, տեղեկատվական-գովազդային մասը*<br>***ՀՄՏՈՒԹՅՈՒՆ***<br>• *Կտիրապետի ինֆորմացիայի ճշտմանը մի քանի աղբյուրից, հասարակությանը տեղեկացնելու և առավելագույն օպերատիվությամբ գործելու հմտություններին*<br>• *Կտիրապետի անաչառ տեղեկատվություն ապահովվելու, սեփական կարծիքը իրականության փոխարեն մատուցելու գայթակղությունից զերծ մնալու հմտություններին*<br>• *Կտիրապետի լրագրողական էթիկայի պահանջներին՝ լսելի դարձնելով հասարակության ձայնը, որակյալ մամուլի սկզբունքներով՝ բացառելով «դեղին մամուլի» գոծելաոճը*<br>• *Կտիրապետի գիտատեսական հիմունքներից ստացած գիտելիքների կիրառմամբ մասնագիտական ոլորտում հետազոտական գործունեության ծավալման հմտություններին* |
| ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ | *Մասնագիտության գործունեության ոլորտները.*<br>*ա. թերթերում, ամսագրերում և այլ պարբերականներում*<br>*բ. հեռուստատեսությունում, ռադիոյում, ինտերնետ-ԶԼՄ-ներում և ժամանակակից մյուս մեդիահամակարգերում (օնլայն ԶԼՄ-ներում, մոբիլ մեդիաներում և այլուր)*<br>*գ.տեղեկատվական գործակալություններում, նախարարությունների, գերատեսչությունների, պետական մյուս հիմնարկների, մունիցիպալ ու մասնավոր կազմակերպությունների տեղեկատվության և հասարակայնության հետ կապի ծառայություններում*<br>*դ.հրատարակչություններում և այլ մասնագիտական կազմակերպություններում,*<br>*ե. գովազդային գործակալություններում, վիճակագրական-հետազոտական կենտրոններում* |